ավարտին հասցնելու համար. «Աւգնեա մեզ Աստուած Փրկիչ մեր. վասն մեծի փառաց անուան քո: Մի՛ մեզ տէր, մի՛ մեզ. այլ անուան քում տուր զփառս, վասն ողորմութեան եւ ճշմարտութեան քո: Հոգիդ քո սուրբ եկեսցէ առ մեզ եւ լուսաւորեալ զմիտս մեր կատարեսցէ զսկսեալս ի մէնջ, ի փառս եւ ի գովեստ սրբոյ երրորդութեանդ ամէն»: Իբրև կառուցվածքային միավոր այս աղոթքը բացառիկ երևույթ է հայ պատմագրության պոետիկայում՝ գոնե իբրև սկիզբ տեղադրությամբ ու բացող-սկսող գործառույթով[8]: Մխիթար Անեցու Պատմության սկզբում էլ կա աղոթային տարր, սակայն դա ներձուլված է տեքստին և առանձին միավոր չէ[9]:

Աղոթքին հաջորդում է պատմագրքի առաջաբանը, որն ունի «Նախադրութիւն առաջիկայ գրոցս պատմութեան» վերնագիրը: Այստեղ Դավրիժեցին համառոտ, բայց հստակ ներկայացնում է «Գիրք պատմութեանց»-ի ***մասին***-ն ու ***ինչպես***-ը, այսինքն՝ բովանդակությունն ու կառուցվածքը. «Պատմութիւն անցից հարուածոց, որք եկին ի վերայ աշխարհիս Հայոց ի յետին ժամանակիս ի թագաւորեն Շահաբաս կոչեցելոյ և ի նորին ազգէն որք են Պարսիկք: Նաև յաղագս անշքանալոյ սրբոյ աթոռոյն Էջմիածնի և նորին կաթուղիկոսացն: Այլ և վասն աղաւաղելոյ կարգաց և կրօնից քրիստոնէութեան: Ընդ սոցին և այլ ևս բանք պատմութեան դիպուածոց քաղաքաց և գաւառաց, որք պատահեցան ի թագաւորաց և յիշխանաց և ի կաթուղիկոսաց և յայլոց, գտցես աստ բաժանեալ ի գլուխ գլուխս ըստ բերման ժամանակին» (էջ 55):

Ինչպես գրում է Աշոտ Սարգսյանը՝ «Հայ միջնադարյան պատմագրական հուշարձանների մեծագույն մասը օժտված է նման մուտքով, մի բան, որից կարելի է ենթադրել, թե դա դիտվել

---

8 Ավելորդ չէ նշել, որ այդ աղոթքը բացակայում է Դավրիժեցու պատմագրքի աշխարհաբար թարգմանության հրատարակության մեջ (տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 17): Հանգամանք, որն անմիջապես աղավաղում է երկի կառուցվածքի լիարժեք պատկերն ու ընկալումը:

9 Տե՛ս ***Մխիթար Անեցի,*** Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, Երևան, 1983: